ԼՐԱՏՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻ ԵՎ ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ-Ի ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 60-ԱՄՅԱԿԻՆ

Նոյեմբերի 28-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում կուսակցական, սովետական և հասարակական կազմակերպությունների, աշխատավորների և սովետական բանակի ռազմիկների, արտասահմանյան հայ համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացավ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի հանդիսավոր նիստը՝ նվիրված Հայկական ՍՍՀ-ի և Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորման 60-ամյակին։

Նախագահությունում էին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Բ. Ե. Սարկիսովը. Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Տ. Սարգսյանը, Սովետական Միության մարշալ Հ. Ք. Բաղրամյանը. Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի անդամներ Գ. Ն. Անդրեևը. Հ. Մ. Ոսկանյանը. Վ. Բ. Ղալումյանը. Կ. Լ. Դալլաքյանը, Գ. Ա. Մարտիրոսյանը. Լ. Ն. Ներսիսյանը, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի անդամության թեկնածուներ Մ. Բ. Աբդումանյանը. Ե. Թ. Ասծատրյանը. Մ. Հ. Մուրադյանը. Լ. Գ. Ստեփկյանը. ՍՄԿԿ Կենտկոմի սեկտորի վարիչ Վ. Ե. Օդենցովը. ընկ. Լ. Ս. Շուստկոն. Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի և Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալները, կուսակցության վետերաններ, արտադրության առաջավորներ, գիտության և մշակույթի գործիչներ.

Հանդիսավոր նիստի մասնակիցները ջերմորեն դիմավորեցին միութենական հանրապետությունների, հերոս քաղաքներ Մոսկվայի և Լենինգրադի, Ռոստովի մարզի և Հունգարական Ժողովրդական Հանրապետության եղբայրացած Դյոր Շոպրոնի մարզի՝ հոբելյանական հանդիսություններին մասնակցելու եկած պատվիրակությունների ղեկավարներին՝ ՌՍՖՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Մ. Ա. Ցասնովին, կուսակցության Մոսկվայի քաղաքային կոմիտեի երկրորդ քարտուղար Ի. Ֆ. Դեմենտևային, կուսակցության Լենինգրադի մարզկոմի երկրորդ քարտուղար Ն. Ցա. Սուսլովին, Ուկրաինական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ա. Պ. Լյաշկոյին, ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամության թեկնածու, Բելոռուսիայի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Տ. Ցա. Կիսելյովին, ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամության թեկնածու, Ուզբեկստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Շ. Ռ. Ռաշիդովին, Ղազախական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Բ. Ա. Աշիմովին, ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամության թեկնածու, Վրաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Է. Ա. Շեարդնաձեին, ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամության թեկնածու, Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Հ. Ա. Ալիևին, Լիտվայի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Պ. Պ. Գրիշկյավիչուսին, Մոլդավիայի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ի. Ի. Բոդյուլին, Լատվիական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Յու. Ցա. Ռուբենին, Կիրգիզիայի կոմկուսի Կենտկոմի երկրորդ քարտուղար Կ. Ե. Ֆոսիչենկոյին, Տաջիկստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ջ. Ռասուլովին. Թուրքմենիայի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Մ. Գ. Դապուրովին, Էստոնական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ի. Գ. Կերիկին, կուսակցության Ռոստովի մարզկոմի առաջին քարտուղար Ի. Ա. Բոնդարենկոյին. Հունգարական սոցիալիստական բանվորական կուսակցության Դյոր Շոպրոնի մարզկոմի առաջին քարտուղար Բելա Հարիին, Անդրկովկասի Կարմրադրոշ զինվորական օկրուգի զորքերի հրամանատար, գեներալ գնդապետ Օ. Ֆ. Կուլիշևին, գեներալ գնդապետ Խ. Մ. Համբարյանին, Անդրկովկասի Կարմրադրոշ սահմանապահ օկրուգի զորքերի

պետ, գեներալ լեյտենանտ Ն. Ի. Մակարովին, Անդրկովկասի Կարմրադրոշ զինվորական օկրուգի քաղվարչության պետ, զինվորական խորհրդի անդամ, գեներալ լեյտենանտ Ա. Ի. Շիրինկինին, Անդրկովկասի Կարմրադրոշ սահմանապահ օկրուգի քաղբաժնի պետ, գեներալ մայոր Մ. Ֆ. Զևնդիլովին:

Հանդիսավոր նիստը ներածական խոսքով բացեց Կ. Ս. Դեմիրճյանը, որին ներկաները դիմավորեցին շերմորեն։

Այս օրերին, ասաց նա, մեր հանրապետության աշխատավորները, կոմունիստները, ամբողջ ժողովուրդն իր հզոր սոցիալիստական հայրենիքի, հարազատ լենինյան կուսակցության հոյակապ մեծագործությունների և հաղթանակների համար ունեցած օրինական հպարտության զգացումով լայնորեն ու հանդիսավորությամբ նշում են պանծալի հոբելյանը՝ Հայկական ՍՍՀ-ի և Հայաստանի կոմունիստական կուսակցության 60-ամյակը։ Հայ ժողովուրդը խորապես գիտակցում է, որ սոցիալական ու ազգային ճնշումից իր լիակատար ազատագրությունը, տնտեսական և հոգևոր ծաղկման բարձունքներին հասնելը, պայքարի և ոգեշունչ ստեղծարար աշխատանքի վեց տասնամյակների ընթացքում իր ձեռք բերած բոլոր վիթխարի նվաճումները Ռնարավոր դարձան մեծ Հոկտեմբերի հաղթանակի, կոմունիստական կուսակցության փորձված ղեկավարության, նրա իմաստուն լենինյան ազգային քաղաքականության, սովետների երկրի ժողովուրդների բարեկամության, նրանց ինտերնացիոնալ միասնության և փոխօգնության շնորհիվ։ Այնուհետև Կ. Ս. Դեմիրճյանը շերմորեն ողջունեց հանդիսությունների մասնակցելու եկած պատվիրակություններին։

Հսկայական խանդավառությամբ, բուռն, երկարատև ծափահարությունների ներքո, հանդիսավոր նիստի մասնակիցները պատվավոր նախագահություն են ընտրում ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն՝ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ Լ. Ի. Բրեժնևի գլխավորությամբ։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Բ. Ե. Սարկիսովը Հայկական ՍՍՀ-ի և Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորման 60-ամյակի մասին զեկուցման համար խոսքը տալիս է Հայաստանի կոմկ.սի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանին։ Պատմությունը վեց տասնամյակ բոլորեց այն անմոռանալի հերոսական օրվանից՝ 1920 թ. նոյեմբերի 29-ից, երբ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները լենինյան կուսակցության ղեկավարությամբ իրենց ձեռքը վերցրին պետական իշխանությունը և մեր հինավուրց հողի վրա բարձրացրին Հոկտեմբերի սրբազան կարմիր դրոշը՝ մեծ վերափոխությունների, աշխարհի հեղափոխական վերակերտման դրոշը, ասաց նա։ Այսօր Սովետական Հայաստանի ժողովրդի համար մեծ ուրախության օր է, մեծ ու պայծառ տոն։ Մեր հայրենիքի բոլոր ժողովուրդների հետ նա անհուն ոգևորությամբ նշում է Հայկական ՍՍՀ-ի և Հայաստանի կոմունիստական կուսակցության պանծալի վաթսունամյակը։

Ապա Կ. Ս. Դեմիրճյանը հրապարակում է Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի ողջույնը՝ ուղղված Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեին, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին, նշելով, որ այնտեղ հիանալիորեն և տարողունակ կերպով ընդգծանրացված է պայքարի և կառուցման այն հերոսական ուղին, որ հայ ժողովուրդը սովետական միասնական ընտանիքում կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ անցել է մեծ Հոկտեմբերի հաղթական դրոշով։

Այնուհետև զեկուցողն ասաց, որ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ Լեոնիդ Իլյիչ Բրեժնևը խնդրել է հանդիսավոր նիստի մասնակիցներին, հանրապետության կոմունիստներին, բոլոր աշխատավորներին հոբելյանի առթիվ հաղորդել սրտագին շնորհավորանքներ և մաղթել նոր հաջողություններ՝ Սովետական Հայաստանի էկոնոմիկայի և կուլտուրայի հետագա զարգացման գործում։ Կ. Ս. Դեմիրճյանը Սովետական Հայաստանի կոմունիստների, աշխատավորների, հանրապետության ամբողջ ժողովրդի կողմից խորին շնորհակալություն ու երախտագիտություն հայտնեց Լ. Ի. Բրեժնևին՝ մեր հանրապետության անշեղ զարգացման, հայ ժողովրդի բարօրության նկատմամբ ցուցաբերած մշտական հոգատարության, շնորհավորանքի շերմ խոսքերի և բարեմաղթությունների համար։

Կ. Ս. Դեմիրճյանը այնուհետև հանգամանորեն խոսեց Սովետական Հայաստանի անցած 60-ամյա ուղու, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումների մասին։ Վերջում նա ասաց, որ արտահայտելով իրենց անհողդողդ նվիրվածությունը Վ. Ի. Լենինի պատգամներին, Հոկտեմբերի գործին, Սովետական Հայաստանի աշխատավորները, ամբողջ ժողովուրդը հոբել-

յանի այս հանդիսավոր օրը հարազատ կուսակցությանը, նրա լենինյան Կենտրոնական կոմիտեին, Լ. Ի. Բրեժնևի գլխավորած Կենտկոմի քաղբյուրոյին հավաստիացնում են, որ իրենք, սրբությամբ պահպանելով սովետների երկրի մեծագույն նվաճումները, այն ամենը, ինչ կազմում է նրա փառքը, հպարտությունը, պատիվը, այսուհետև ևս անձնվեր աշխատանքով կամրապնդեն սոցիալիստական հայրենիքի հզորությունը, արժանավայել կդիմավորեն հարազատ լենինյան կուսակցության XXVI համագումարը։

Հանդիսավոր նիստում ողջույնի ջերմ խոսքով հանդես եկան հոբելյանական հանդիսություններին մասնակցելու եկած պատվիրակությունների ղեկավարները, Հ. Ք. Բաղրամյանը և սփյուռքահայ հասարակայնության ներկայացուցիչ Գ. Ադդարյանը։ Նրանք նշեցին այն վիթխարի հաջողությունները, որոնք ձեռք է բերել հայ ժողովուրդը սովետական իշխանության տարիներին և նրան մաղթեցին հետագա բարգավաճում։ Հանդիսավոր նիստի մասնակիցներին ողջունեցին հանրապետության մայրաքաղաքի պիոներները ու դպրոցականները, սովետական բանակի ներկայացուցիչները։

Նիստի մասնակիցները մեծ ոգևորությամբ ընդունեցին ողջույնի նամակ՝ հասցեագրված Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեին, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին, Լ. Ի. Բրեժնևին։

Եզրափակման խոսքով ներկաներին դիմեց Կ. Ս. Դեմիրճյանը։ Նա ասաց, որ Հայկական ՍՍՀ-ի և Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորման 60-ամյակին նվիրված հանդիսությունները հանրապետությունում վերածվեցին հարազատ կոմունիստական կուսակցության, նրա լենինյան Կենտրոնական կոմիտեի շուրջը Հայաստանի աշխատավորների սերտ համախմբվածության հուզիչ ցույցի։ Հայ ժողովուրդը հակայական ուրախությամբ ընդունեց ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահության և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի ողջույնը։ Դա հոբելյանի տոնակատարությանը առանձնահատուկ նշանակալիություն և հանդիսավորություն տվեց, հնչեց որպես կուսակցության ոգեշունչ կոչ՝ դեպի նոր մեծագործություններ ու սխրանքներ հանուն մեր սոցիալիստական հայրենիքի հետագա ծաղկման։

Ապա Կ. Ս. Դեմիրճյանը սովետական Հայաստանի աշխատավորության անունից կրկին անդամ ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեին, ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահությանը և Մինիստրների խորհրդին, անձամբ Լ. Ի. Բրեժնևին խորին շնորհակալություն և սրտագին երախտագիտություն հայտնեց հանրապետությանը ցույց տրվող մշտական ուշադրության և մեծ օգնության համար, նրա էկոնոմիկայի և կուլտուրայի անշեղ աճի, ժողովրդի բարեկեցության բարձրացման նկատմամբ ցուցաբերվող հայրական հոգատարության համար։ Այնուհետև նա հանդիսավոր նիստի մասնակիցների, հայ ժողովրդի անունից խորին շնորհակալություն հայտնեց հանդիսություններին մասնակցելու եկած պատվիրակություններին՝ ողջույնի ջերմ խոսքերի համար, կոմունիզմի կառուցման համաժողովրդական գործում աշխատավորական Հայաստանի ավանդի բարձր գնահատման, հայ ժողովրդի հասցեին ասված բարի խոսքերի և սրտագին բարեմաղթությունների համար։ Վերջում Կ. Ս. Դեմիրճյանն ասաց, որ հանրապետության կոմունիստները, բոլոր աշխատավորները ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեին, Կենտկոմի քաղբյուրոյին, անձամբ Լ. Ի. Բրեժնևին հավաստիացնում են, որ այսուհետև ևս իրենց բոլոր ուժերը, եռանդն ու գիտելիքները կնվիրեն մեր երկրի տնտեսական և պաշտպանական հզորության հետագա ամրապնդման պայքարին, կոմունիստական շինարարության վիթխարի խնդիրների կենսագործմանը։